«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային Տոների, Ծեսերի Կազմակերպման Առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Սաթենիկ Մանուկյան

Մանկապարտեզ՝ «13» ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3
ԳԼՈՒԽ 1: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
1.1 Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ..... 4
1.2. ՏՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ և ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ 4
ԳԼՈՒԽ 2: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ 6
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ 7
ԴԻՏԱՐԿՈՒՄ..... 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի համար նվիրական է հայրենասիրության, ազգապահպանության գաղափարը, որը պետք է սկսել մանկուց:Մշակույթը չէր պահպանվի, եթե գոյություն չունենային այն սերնդեսերունդ փոխանցման միջոցները: Կրթելով և դաստիարակելով, ծանոթացնելով ազգային տոներին, ծեսերին և սովորույթներին՝ արդյունքում կունենանք ազգասեր, հայրենասեր երեխաներ. «Ուր որ հայրենիքը երկեր կըլսունի, հոն հայրենիքը ողջ է»:(Ղ. Ալիշան)

Տոնական ծեսերը և ծիսական գործողությունները նախադպրոցական տարիքում երեխայի կողմից ընկալվում է որպես խաղ, դերախաղ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտաայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակրգերին պատկանելու ձևեր:

Հետազոտության նպատակը

- Գործնական փորձարկման միջոցով ցույց տալ և ծանոթացնել ազգային տոներին և ծեսերին՝ երեխային մասնակից դարձնելով դրան:
- Ընտրել և ավագ խմբում փորձարկել ազգային տոների ծեսերի և ծիսական գործունեության խաղեր, երգ-պարեր, Ամանորի արարողակարգ:
- Ուսումնասիրել և վեր հանել հին ու մոռացված ազգային խաղերն ու սովորույթները, երեխային դարձնել ազգային ծեսերի կրողը, փոխանցողն ու տարածողը:
- Եթե մանկապարտեզում հմտալից կիրառվի ազգային տոների,ծեսերի կազմակերզումը, ապա այն կրթադաստիարակչական գործընթացում երեխայի մեջ կձևավորի ազգային հարուստ մշակույթի, վարք ու բարքի, ազգային մտածելակերպի հատուկ հատկանիշների հիմքեր՝ դաստիարակելով սեր և հետաքրքրություն սեփական ժողովրդի անցյալի և հայրենի երկրի նկատմամբ:

Աշխատանքը ունի հետևյալ բաժինները. Ներածություն, Գլուխ 1, Գլուխ 2, Պարապմունքի պլան,Դիտարկում, Եզրակացություն, Գրականության ցանկ:

ԳԼՈՒԽ 1: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ

Ազգային մշակույթի յուրացումը դրված է մանկապարտեզի ծրագրի հիմքում: Ազգային ծեսերի, տոների իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ կազմակերպման ձևերից է, ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան: «Ծես» հասկացությունը սովորաբար ընկալվում է հաստատուն գործունեության հետևողականություն, որն ունի արարողական բնույթ և լայնորեն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնությունը:

Ըստ Ա.Սարգսյանի «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր:»: Ծեսերը ժողովրդի միջոցով հասարակության հարաբերությունները փոխանցող մեխանիզմներ են:[1]

1.2. ՏՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ և ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՁՄԱՆ ՎՐԱ

Ծեսն այն միջավայրն է, որը երեխաներին հնարավորություն է տալիս խաղալով ինքնադրսևորվել, յուրացնել ծանոթ և անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա վերցնել պատասխանատվություն, հերթով գործողություններ կատարել՝ ձեռք բերելով զիջելու կարողություն: Խաղերի միջոցով տոնական ծեսերը դառնում են ավելի տպավորիչ և հասանելի, որոնք զարգացնում են երեխաների ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործելու

[1] Գեղամյան Ա. Ա., «Ծեսը,ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ»

կարողությունը, հաղորդակցումը, կամածին վարքը, լսելու կարողությունը, ընկալումը, վերլուծելու, համադրելու, երևույթների մեջ կապ գտնելու կարողությունը, ճիշտ կողմնորոշումը, ինքնատիրապետումը, ինքուրույն աշխատելու ունակությունը, հարստանում է բառապաշարը, զարգանում է խոշոր և մանր մոտորիկան՝ ընդհանուր շարժողական համակարգը: Ծիսական խաղերը ազդում են երեխայի խոսքի, սոցիալական, ինչպես նաև մտավոր և հուզական զարգացման վրա: Ազգային ծիսական երաժշտությունը, պարը նպաստում և ամբողջականացնում են ծեսերի և տոների պատկերացումները: Երեխաների մոտ ձևավորվում է բարձր ճաշակ, ազդում զգացմունքների վրա: Նրանք սիրով և ջերմությամբ են կատարում երգերը, պարերը, խաղիկները, ինչի միջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը: Ծիսական երգերը իրենց մեջ պարունակում են արարողակարգեր, որոնց շնորհիվ երեխաները գովում են մեկը մյուսին, նվերներ փոխանակում, ինչն էլ երգ ու երաժշտության հետ համատեղ ավելի են նպաստում սոցիալական զարգացմանը:

Տոնական ծեսերի կիրառման ընթացքում օգտագործված խաղային հիմնական մեթոդներն են ՝

- իրավիճակների խաղարկումը,
- դերախաղը,
- խմբային աշխատանք:

ԳԼՈՒԽ 2: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

«Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ի՞նչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից»:(Ա. Շահինյան)

Ուսումնական տարվա ընթացքում գործնականորեն կիրառվում են տեսական դրույթները՝ համոզվելով, որ իրոք տոների և ծեսերի իրականացումը կարևոր նախապայման և հարմար միջավայր են երեխաների ազգային արժեքները ճանաչելու, կրելու և այն սերնդեսերունդ փոխանցելու համար:

Երեխաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ աշխատանքի շնորհիվ դառնում են լիիրավ մասնակիցներ և ձեռք բերում որոշակի կարողություններ և հմտություններ:

Տյարն Ընդառաջին երգելով աղանձ են բովում և ձևավորում, Բարեկենդանին թխում միջինք, Ծաղկազարդին պատրաստած կարկաչաներով պարում, Զատկի տոնին ընդառաջ ածիկի ցորեն ցանում,նախշում տոնական ձվերը, ձևավորում կանաչ ծիլերի և ուռենու ճյուղերի վրա: Երգերի, խաղիկների, պարերի հետ զուգահեռ խաղում զատկական մրցակցական խաղեր, հրաժեշտ տալիս Ակլատիզին և Ուտիս տատին, որոնք պատրաստվում են Մեծ Պահքը սկսվելուն պես: Համբարձման տոնին յոթ աղբյուրից ջուր է բերվում, յոթ տեսակ ծաղիկ քաղվում և ձևավորում տոնի փարչը, պսակներ հյուսվում, վիճակի երգերով բախտ գուշակվում:

Մեծերը մանկանում են, հասնում մեր ազգային ակունքներին, խաղում և ճաշակում կաթնապուրը: Ստեղծվում է բարության և սիրո մթնոլորտ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեման՝ «Ամանոր»

Տեսակը՝ ինտեգրված՝ խոսքի զարգացում+ երաժշտություն

Նպատակը՝

1. Ամրապնդել երեխաների մոտ ազգային տոների,ծեսերի մասին ունեցած գիտելիքները:
2. Զարգացնել երեխաների կապակցված խոսքը:
3. Ձևավորել գեղագիտական ճաշակ:
4. Զարգացնել գեղագիտական հույզեր և զգացմունքներ պարերի և պարերգերի ընկալման և կատարման գործընթացում:

Նախապատրաստական աշխատանք՝

Նախապես անցկացնել զրույցներ ազգային «Ամանոր» տոնի, նրա սովորույթների մասին, սովորել երգեր, պարեր, ամանորյա բարեմաղթանքներ, պատրաստել ձևավորումներ, տոնական խաղալիքներ, նկարել, ներկել , նախշազարդել թեմատիկ նկարներ, թխել տարեհաց, ասիլ-բասիլներ:

Անհրաժեշտ նյութեր՝

Չորս նկարազարդ հարցաթերթիկներով քսակներ, ավազե ժամացույց, չորս պտղատու ծառի ճյուղեր, ընդեղեն, չրեր , գունավոր թելեր, սկուտեղով տարեհաց, ասիլ-բասիլներ, Կաղանդ պապի նվերներ երեխաների թվով, տեսանյութեր ամանորյա ծեսերի, սովորույթների վերաբերյալ, «Թամզարա», «Վերվերի» պարերի ձայնագրություններ, գունավոր թաշկինակներ, գույնզգույն գուլպաներ:

Անցկացման վայրը՝

Դահլիճ, որտեղ դրված են չորս սեղաններ ազգային տարազով սփրոցներով, յուրաքանչյուր սեղանին մեկական քսակ, ծառի ճյուղ, զարդարանքի պարագաներ, առանձին սեղանի վրա տարեգաթա:

Պարապմունքի ընթացքը՝

«Թամզարա» պարով երեխաները մտնում են դահլիճ, տեղավորվում ըստ չորս ենթախմբերի սեղանների շուրջ և ողջունում ներկաներին (ժյուրիի անդամներ):

Առաջին խումբ - Բարի Նավասարդ:

Երկրորդ խումբ – Բարի Ամանոր:

Երրորդ խումբ – Բարի Կաղանդ:

Չորրորդ խումբ – Բարի Նոր տարի:

Դաստիարակ – Հնում հայերը հավատում էին.«Ինչպես սկսեն տարին, այնպես էլ կշարունակեն: Նոր տարվա շեմը պետք է հատել ուրախ ծեսերով:»

Երեխաներ, այսօրվա մեր պարապմունքը խաղ-վիկտորինա է: Եկեք հիշենք, թե ի՞նչ գիտենք Ամանորի, ամանորյա սովորույթների և ծեսերի մասին:

Առաջին փուլ

Ձեր սեղաններին դրված են քսակներ, որոնցում կան նկարազարդ հարցեր: Յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի տրված հարցերին:

Հարցի պատասխանը մտածելու, քննարկելու և ներկայացնելու համար տրվում է ժամանակ:

Հարց 1 – Հնում ինչպե՞ս են պատրաստվել Ամանորին

Պատասխան- Ամանորի տոնակատարությունները սկսում էին ծիսական մաքրությամբ, հարդարում էին բնակարանը, տոնական ծիսական կերակուրներ պատրաստում: Կանայք բուրդ էին գզում, թել մանում՝ կապելով հին տարին նոր տարու հետ, դրանցով գուլպաներ էին գործում տան բոլոր անդամների համար: Ընտանիքի անդամները լողանում էին և նոր շապիկ, գուլպաներ հագնում, որ նորով ոտքը բարի լինի Նոր տարում:

Երկրորդ խումբ

Հարց 2 – Ի՞նչ կերակրատեսակներ են պատրաստել Ամանորին

Պատասխան – Քանի որ հունվարի մեկը ընկնում էր հայոց Սուրբ ծննդյան տոնի շաբաթվա մեջ՝ պաս օր էր, պատրաստում էին պասի կերակրատեսակներ, օրինակ՝ հատիկեղենից քյուֆթա, պասուց տոլմա, ծեծած կորկոտ, չամիչով,չոր ծիրանով և սալորով մարիամապուր, լոբով, ավելուկով կերակուրներ: Սեղանին ջանում էին դնել յոթ տեսակ թարմ միրգ, ընդեղեն, պաստեղներ, չրեղեն, աղանձ մաքրած ընկույզի, նուշի, բոված կանեփի, չամիչի, բոված սիսեռի հետ խառնած:

Թխում էին «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ», «Փուռնիկ»: «Տարին» կարող էր լինել գաթա, բաղարջ կլոր կամ խաչաձև: Կերակրատեսակների պատրաստումը ուղեկցվում է երգ ու պարով:

Երրորդ խումբ

Հարց 3 – Ինչպե՞ս են ձևավորել Կաղանդի ծառը:

Պատասխան – Հնում, ինչպես հիմա փոքրերն էին զարդարում տոնական ծառը, որն ամենևին եղևնի չէր, այլ որևէ պտղատու ծառ: Այն անվանում էին «ծառ խնկենի» կամ «Կաղանդի ծառ», խաղալիքների ու զարդարանքների փոխարեն տոնի ծառից կախում էին ընկույզ, խնձոր, չիր, գույնզգույն թելեր ու փշատե շարոցներ: Ծառն իր զարդարանքով խորհրդանշում էր գալիք տարվա առատությունը: Ծառը միշտ եղել է Նոր տարվա սեղանին, որովհետև երեխաները թափ են տվել ու կերել չիրն ու չամիչը, ապա նորից զարդարել: Այս ավանդույթը պահպանվել է մինչև այժմ:

Չորրորդ խումբ

Հարց 4 – Ինչպե՞ս էին դիմավորում Ամանորը:

Պատասխան - Նոր տարին սկսվում էր տոնական ընթրիքով ամբողջ ընտանիքով: Տան ավագը օրհնում էր սեղանը և առաջին բաժակի հետ առաջարկում մեղր համտեսել. «Անուշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ վարվենք:»: Տան շեմին փռվում էր կարմիր շոր, տանտիկինը մեղրով և ալյուրով խաչ էր նկարում դռան վրա, որ Նոր տարին առատությամբ ու անուշությամբ մտնի տուն.

Արի բարով, կարմիր շորով թող բարով գա թազա տարին,
Թող մեր ժողովուրդը խաղաղություն ունենա,

Թող շեմն օրհնված լինի ու նոր տարին բարի լինի:

Նոր տարվա գիշերը Կաղանդ պապը նվերներ էր բերում փոքրիներին

Տան շեմը բաց էր հյուրերի համար, որոնք դատարկաձեռն չէին այցելում ու տուն էին մտնում աջ ոտքով:

Երաժշտական դադար - երգ «Զպիկ Զպիկ Զարինա»

Երկրորդ փուլ

Խաղավար-դաստիարակ – Դիտե՛ք հոլովակը և պատմե՛ք՝ ինչ ծիսական սովորույթներ են ներկայացված:

Առաջին խումբ – Այստեղ թխում են տարեհացը,որի մեջ անակնկալ կա՝ լոբի, կորիզ կամ դրամ: Տանտիկինը «Տարին» դնում է սկուտեղի վրա և դուրս գալիս տնից, թեքվում է դեպի արևելք ու դովլաթ է կանչում, ապա տուն է մտնում, վրայի մեղրը բաժանում բոլորին, իսկ «Տարին» պահում ծննդյան տոնի նախորդ օրը տան բոլոր անդամների,հաճախ նաև արտի, հանդի,կենդանիների թվով կտրելու համար և ասում.«Ում էլ ընկնի դովլաթը, թող բարով ընկնի, թող խերով դիմավորի տարին»

Երկրորդ խումբ – Խմորից երեխաները պատրաստում են խմորե տիկնիկներ՝ Ասիլ բասիլներ և դրանցով կատարում գուշակություններ: Եթե այդ հացիկները թխվելուց շատ էին ուռչում, ուրեմն հաջող տարի է լինելու, եթե ոչ՝ ուրեմն սակավ: Այս ամենը ուղեկցվում էր երգերով. «Տատիկն ալուր կմաղե, Վըր ամբարում կշաղե...»

Երրորդ խումբ – Երեխաները երգերով, պարերով շրջում են տնից տուն, երդիկից կախում գուլպա, կողով կամ պարկ, ասելով.

- Լոս,լոս կալանդոս, կալանդոսը եկել է, կալանդոս տվեք:
- Շալե շապիկ հագել է, շալե գոտիկ կապել է, կալանդոս տվեք:
- Ամեն տարին բարի հասնի,կալանդոս տվեք :

Տանտիկինը ուտելիք կամ քաղցրավենիք է դնում դրա մեջ, հաճախ որպես կատակ՝ կատու կամ կոշիկ: Երեխաները երգում են.

Ահա եկավ Նոր տարին,
Հեզը բերավ նոր տարին,
Մանր տղերք ենք ուրախ,
Ունենք կաղին, կոզինախ:

Ու միասին ճաշակում էին ասելով՝

Լիքը օրեր շատ ունենաք
Կարմիր օրեր շատ ունենաք

Կարմիր օրով, կարմիր շորով
Ուրախ կենաք միշտ կուշտ փորո

Չորրորդ խումբ - Նոր Տարվա նախորդ գիշերը բոլոր հոսող ջրերը մեկ վայրկյան ոսկեբեր էին դառնում: Պատանիներն ու աղջիկներն այդ երեկո գնում էին մոտակա աղբյուրը սպասելով հրաշալի ակնթարթին, որ թարմ ջուր ու ջրի հետ նաև բարիք տանեն տուն:

Ամանորի գիշերը տան նահապետը մեծ գերան էր բերում, վառ և անմար էր պահում տան օջախն ու թոնիրը մինչև Քրիստոսի ծննդյան տոնի երեկոն ասելով.«Փառքդ շատ լինի, իմ օջախը թող անմար լինի և բոլոր հայոց օջախները թող միշտ վառ մնան:»:[2]

Երգ «Ավետիս»

Երրորդ փուլ

Դաստիարակ– Երեխաներ, ձեր սեղաններին կան ծառի ճյուղեր, ընկուզեղեն, շարոցներ, չրեր ու ունավոր թելեր: Դուք պետք է գեղեցիկ զարդարեք ծառ-խնկենին: «Խնկի ծառ» երգելով երեխաները զարդարում են ճյուղերը:

Դաստիարակ- Իսկ այժմ այն միացնենք իրար և ստանանք կաղանդի ծառը:

Ժյուրին շնորհակալություն է հայտնում լավ աշխատանքի համար և որպես խրախուսանք դաստիարակը «տարեգաթա» է կտրում բոլորի թվով և բաժանում:Ում բաժին է հասնում անակնկալով կտորը, նա հաջողակ է լինում այդ տարի:

Ներս է գալիս Կաղանդ պապը,շնորհավորում երեխաների Ամանորը.

- *Շնորհավոր ձեր Նոր տարին, առատ, ուրախ,խաղաղ ու անկորուստ տարի լինի, բարով հասնեք մեկ էլ էս օրվան,առողջ ու երջանիկ լինեք:*

Հետո նվերներ է բաժանում երեխաներին և միասին պարում են «Վերվերի» պարը:

[2] Ս.Ս. Մկրտչյան, Տոներ, 2010, Երևան, էջ 17-19

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Տնօրեն՝ Շ. Զոհրաբյան

- Արդյո՞ք դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին և ո՞ր կարողությունների զարգացմանն էին ուղղված աշխատանքները:
  - Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակներին, որոնք ուղղված էին արժեհամակարգի, հոգևոր դաստիարակության, ազգային մշակույթի պահպանմանը և գիտելիքները գրագետ ներկայացնելուն:
- Ինչպե՞ս էին զգում իրենց երեխաները:
  - Երեխաները անկաշկանդ էին, ազատ քննարկում էին, մեկնաբանում, տալով լիարժեք պատասխաններ, քանի որ խորքային ուսումնասիրել էին իրենց էթնոտիպը ճանաչելու,կիրառելու մեր ազգային ծեսերն ու սովորույթները՝ ձեռք բերելով հմտություններ:Երեխաները և մանկավարժները դարձել էին միասնական և ներդաշնակ մի ամբողջություն:
- Հիմնավորել.Արդյո՞ք դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է նախադպրոցական կրթության մեջ և ի՞նչ խնդիրների լուծմանն է միտված այն:
  - Այո, դաստիարակի նախընտրած թեման արդիական է ու պահանջված նախադպրոցական կրթության և դաստիարակչական աշխատանքի արդյունավետ գործընթացի համար: Միտված է երեխաներին ազգային հոգեբանությամբ դաստիարակելու, մշակույթը սերնդեսերունդ փոխանցելու, հայրենասիրություն սերմանելու մեծ առաքելության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ավարտին ուսումնասիրելով և փորձարկելով եկա հետևյալ եզրահանգումներին.

- Մանկապարտեզում երեխաների ներդաշնակ և հոգևոր զարգացման առանցքային առանձնահատկություններից մեկը ազգային տոների, ծեսերի յուրացումն է,որտեղ երեխան դառնում է այս ամենի կրողը և ակտիվ փոխանցողը:
- Կազմակերպչական գործունեության ընթացքում շփվելով, հաղորդակցվելով հասակակիցների և մեծահասկաների հետ, երեխան խոսում է, պատմում, կարծիք է հայտնում, նկարագրում, մեկնաբանում այն ամենի վերաբերյալ, ինչ անում է:
- Զարգանում է երեխաների խոսքը, միտքը, ստեղծագործական կարողությունները, սոցիալական և հուզական հմտությունները, երևակայությունն ու ուշադրությունը:

Պարապմունքի ընթացքում հասա այն նպատակներին, որոնք դրվել էին ներածության մեջ:

Այս թեմայի շրջանակներում կուզեի, որ դաստիարակները հետագա աշխատանքում ուշադրություն դարձնեին ազգային արժեքների ուսումնասիրմանը, կիրառմանը, պահպանմանը, քանի որ այդ կերպ է հնարավոր ազգային ոգու, մտածելակերպի, հոգեբանության, վարք ու բարքի արմատավորումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 302

Գեղամյան Ա.Ա., «Ծեսը,ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ»

Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Երևան, 2005, էջ 21-31

Մկրտչյան Ս., Տոներ, 2010, Երևան, էջ 17-19

Շահինյան Ա., Կաքավիկ, 2008, Երևան, էջ 28, 81

Տեր - Ստեփանյան Ս.Լ. , Հայը և իր երգը, 2011, Երևան, Տիգրան Մեծ

Առավոտ Լուսո, Նոր տարվա շեմը պետք է հատել միայն ուրախ ծեսերով, https://www.youtube.com/watch?v=FNCu9ExeHEY , Հանրային հեռուստաընկերություն, 31.12.2016, վերջին մուտք 20.12.2022

Ավանդական Ամանոր, https://www.youtube.com/watch?v=p9CdyT23om0 , Շողակաթ Հեռուստաընկերություն, 31.12.2021, վերջին մուտք 21.12.2022

Ավանդական Ամանոր, https://www.youtube.com/watch?v=mRjPm_MWgaw , Հայ Ասպետ, 26.01.2021, վերջին մուտք 21.12.2022